«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Խոսքային հաղորդակցում*

Առարկան՝ *Աշխարհագրություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Պետրոսյան Մելսիդա*

Ուսումնական հաստատություն՝ *Բաղրամյանի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն	Պետրոսյան Մելսիդա
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	Բաղրամյանի միջնակարգ դպրոց
Մասնագիտություն	Ուսուցչուհի
Հեռախոսահամար	077-88-61-22
Էլ. հասցե	petrosyanmelsida4gmail.com
Դասավանդվող առարկա (առարկաներ)	Աշխարհագրություն

Բովանդակություն

Ներածություն----------

Գլուխ 1. Շփում և հաղորդակցում

1.1. Պատմել, հաղորդել, ասել----------

1.2. Կիսել ուրախությունը կամ տխրությունը----------

1.3. Օգնություն խնդրել կամ օգնություն առաջարկել ----------

Գլուխ 2. Հաղորդակցության տեսակները

2.1. Խոսքային և ոչ խոսքային----------

2.2. Բանավոր և գրավոր հաղորդակցություն ----------

2.3. Միջանձնային, խմբային և զանգվածային հաղորդակցություն ----------

2.4. Մտերմիկ կամ գործնական, պաշտոնական հաղորդակցություն ----------

Գլուխ 3. Խոսքային ժանրեր

3.1. Խոսքային գործունեություն----------

Գլուխ 4. Բարեկիրթ շփում, հաղորդակցություն

4.1. Բարեկիրթ ձևով մխիթարել, ցավակցել ----------

4.2. Բարեկիրթ –ոչ բարեկիրթ ----------

4.3. Քաղաքավարի, բարեկիրթ, բարեհամբյուր ----------

Եզրակացություն ----------

Գրականության ցանկ ----------

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական, խոսք և հաղորդակցում վարելու կարողության ձևավորումը: Այս է պատճառը, որ ներկայումս բավականին արդիական է կրտսեր դպրոցականների խոսքի և հաղորդակցման գործունեությանը նպաստող մտավոր կարողությունների զարգացմանը միտված հնարների որոնման խնդիրը: Տարրական դպրոցում են ձևավորվում երեխայի անձի բազմաթիվ որակները, այդ թվում՝ նրա հաղորդակցումը: Այս կարողության ձևավորման միջոցներից են խոսքը և հաղորդակցումը:

Արդի ուսուցման հիմնական նպատակն է ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և այն կիրառելու կարողություններ: Եթե վաղ տարիքում երեխայի հաղորդակցական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ խոսքի և հաղորդակցման գործունեության մեջ:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կապակցված խոսքի կառուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի խոսքին և հաղորդակցմանը, մտքի թռիչքին, որն էլ իր հերթին հետագայում կրտսեր դպրոցականի մոտ վերածվում է կարողության:

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքներն ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը:

Հայտնի է, որ բանավոր խոսքը հաղորդակցման հիմնական միջոցներից մեկն է: Իր մտքերը, ապրումները և ցանկությունները համարժեքորեն վերարտադրելու համար երեխան պետք է տիրապետի խոսքի զարգացման հմտություններին, քերականական կառուցվածքին, կապակցված խոսքին, հնչարտասանական

առանձնահատկություններին, հնչերանգի օգտագործման կուլտուրային: Նա պետք է ունենա հարուստ և ակտիվ բառապաշար:

Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է: Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Խոսքը մարդկային հասարակության մեջ հաղորդակցման կարևորագույն գործոն է և ինքնահաստատման սեփական եսը դրսևորելու, մտածողության, աշխարհընկալման կարողությունների զարգացման ամենաանհրաժեշտ միջոցը: Այդ է պատճառը, որ տարրական դասարաններում մայրենիին հատկացված ժամաքանակից, իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացնել աշակերտների խոսքային կարողությունների զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով «Խոսք և հաղորդակցություն»:

Տարրական կրթությունը հանրակրթության հիմքն է: Այս փուլում ուսուցման առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝ սովորողների տարիքային առանձնահատկություններով, մյուսից կողմից՝ կրթական համակարգի սկզբնական փուլի պայմաններով: Այս փուլում է տեղի ունենում ուսումնական հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը, ինքնագիտակցության զարգացումը:

«Մայրենի» առարկայի նպատակն է՝

●ձևավորել այնպիսի անձ, որը տիրապետելով որոշակի բովանդակային նյութի, կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ,

●իր խոսքը կառուցել այդ իրադրությանը համապատասխան՝ հաշվի առնելով իր մտահղացումը, հաղորդակցական նպատակը, այսինքն՝ արդյունավետ հաղորդակցվել,

●զարգացնել մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունները,

●ստեղծել լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, աշխարհայացքային պատկերացումների հիմքեր,

●ձևավորել աշխատանքային նախնական հմտություններ,

●ձևավորել բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքեր,

●ապահովել միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակ:

Մայրենի լեզվի ուսուցման մասին խոսելիս պետք է հստակ տարբերակել հարցի երկու կողմը՝ մայրենի լեզուն՝ որպես ուսումնական առարկա և մայրենի լեզուն՝ որպես կրթության լեզու:

Կրթության լեզուն իմացության ճանաչողության հիմքն է:

«Խոսք և հաղորդակցության» ժամերի նպատակն է ձևավորել այնպիսի անձ, որ կարողանալ ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ, իր խոսքը կառուցել այդ

իրադրությանը համապատասխան՝ հաշվի առնելով իր մտահաղացումը, այսինքն՝ արդյունավետորեն հաղորդակիցվի:

Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է ճիշտ, արդյունավետ և տեղին խոսք:

Այս դասաժամի հետ առնչվող խնդիրներն են՝

●բառապաշարի հարստացում և աշակերտների խոսքի քերականական կառուցվածքի մշակում՝ խոսքային իրավիճակին համապատասխան ճիշտ, արտահայտիչ լեզվական միջոցների ընտրության պահանջով,

●լեզվական կանոնների ուսուցում և դրանց նպատակահարմար ու տեղին գործածություն՝ կախված խոսքային իրավիճակից, իմաստից և արտահայտման ոճից,

●աշակերտների խոսքային գործունեության կատարելագործում և զարգացում, այլ կերպ ասած՝ «ճիշտ» խոսքի հիմնական հատկանիշների մշակում:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների (կարդալ, գրել, լսել, խոսել) ուղղությամբ կազմակերպված համակարգված և նպատակամետ աշխատանքն է: Այն ունի ուրույն խնդիրներ և նպատակներ: Գրաճանաչության դեռևս նախաայբբենական փուլից սովորողների խոսքի և հաղորդակցման խնդրի պատշաճ կարևորության ընդունումը մանկավարժներին մղել է փնտրտուքի և ծնել բազում հնարների մի ամբողջ զինանոց: Դրա կիրառումը միտված է կրտսեր դպրոցում երեխայի խոսքի զարգացմանը, միջավայրում հաղորդակցման, իր հույզերի մասին տարբեր արտահայտման ձևեր օգտագործելու կարողությունների զարգացմանը:

Այս ժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի հաղորդակցման և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի կառուցվածքը պայմանավորված է ուսումնական խնդիրների և խոսքային իրավիճակների բովանդակությամբ և նպատակներով:

Այստեղ տեղ են գտել կառուցվածքային այնպիսի տարրեր, ինչպիսիք են.

- հաղորդակցական նպատակի սահմանում և դրա իրագործման խոսքային միջոցների ընտրություն,
- խոսքային իրավիճակի ներմուծում և խոսքի դրդապատճառի ստեղծում,
- ուսումնական խնդրի որոշում և դրա լուծման եղանակների և քայլաշարերի որոշում,
- ուսումնական և խոսքային գործունեության կազմակերպում՝ գրավոր և բանավոր ձևերով արտահայտվելու միջոցով,

- ստեղծված տեքստերի և բանավոր պատումների ստուգում և վերլուծություն՝ հետագա շտկողական աշխատանքով,
- խոսքի իրականացված նպատակների ընդհանրացում և եզրահանգում:

Տարրական դպրոցի տարբեր դասարաններում «Խոսք և հաղորդակցություն» ժամերին նպատակահարմար է աշխատանքներն այնպես կազմակերպել, որպեսզի առաջադրանքներն ապահովեն այս կամ այն կարողության ու հմտության աստիճանական զարգացումն ու խորացումը:

«Խոսք և հաղորդակցություն» ձեռնարկում մեթոդական ցուցումներն ու առաջադրանքների նմուշները ներկայացված են հետևյալ կառուցվածքով.

- շփում և հաղորդակցություն
- հաղորդակցության տեսակներ
- խոսքային ժանրեր
- բարեկիրթ շփում և հաղորդակցություն:

Կիրառվող մեթոդներ

●մասնագիտական գրականության ուսումնասիրում,

●ժամանակակից համագործակցային մեթոդների օգտագործում,

●զրույց՝ հարցազրույց, տեղեկատվական զրույց, նախապատրաստական զրույց:

ԳԼՈՒԽ 1. ՇՓՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շփումը երկու և ավելի մարդկանց հաղորդակցությունն է, որն ուղղված է փոխադարձ ըմբռնմանը, փոխհարաբերությունների հաստատմանը և զարգացմանը, միմյանց վիճակների, հայացքների և վարքի վրա փոխադարձաբար ազդելուն: Շփման մասնակիցները կարող են լինել ոչ միայն մարդիկ, այլ նաև կենդանիներ, կենդանի օրգանիզմներ: Սակայն մարդկանց և կենդանիների շփումը իրարից տարբերվում են գիտակցվածության մակարդակով:

Երեխան պետք է հասկանա, որ շփվում են ամենատարբեր նպատակներով՝

- պատմելու, հաղորդելու, ասելու,
- ուրախությունը կամ տխրությունը կիսելու,
- օգնություն խնդրելու կամ օգնություն առաջարկելու,
- խորհուրդ հարցնելու կամ խորհուրդ տալու,
- համոզելու, ազդելու, ներգործելու և այլն:

1.1. Պատմել, հաղորդել, ասել: Հաճախ երեխաների խոսքը արհեստական է՝ ոչ բնական է լինում այն պատճառով, երբ նա խոսում է որևէ հեքիաթի, պատմության հերոսների կենսափորձի, մտքերի, հույզերի, վերաբերմունքի մասին:

Երեխաները ավելի ազատ, անկաշկանդ են հաղորդակցվում, երբ խոսում են իրենց առօրյա շփումների, ծանոթ ու հարազատ մարդկանց, իրերի, երևույթների, սեփական հույզերի և զգացմունքների մասին:

Օրինակ՝ յուրաքանչյուր օրվա մայրենիի ժամի 5-6 րոպեները տրամադրել «օրվա լուրերին», որը կկոչեն «Հետաքրքիր լուրեր»: Ամեն օր ընթերցված լուրերն ամրացվում են դասարանի «Նորությունների պատին»: Շաբաթվա վերջում «Խոսք և հաղորդակցություն» դասաժամին դասարանը կարող է քվեարկությամբ ընտրել լավագույն լուրերը՝ ամենա…, ամենա:

1.2. Կիսել ուրախությունը կամ տխրությունը: Մարդիկ շփվելիս նաև հաղորդակցվում են իրենց հույզերով, խոսում են իրենց ուրախության և տխրության, հիացմունքի և զարմանքի, հրճվանքի և ափսոսանքի, վախի և անհանգստության մասին:

Երեխաների հետ կարելի է զրուցել հետևյալ հարցերի շուրջ.

- Ամենից հաճախ ինչի՞ց է ընկնում քո տրամադրությունը, ինչի՞ց ես տխրում:
- Ի՞նչն է քեզ ամենաշատը ուրախացնում:
- Իսկ գիտե՞ս, որ մարդիկ կարող են փոխել և՛ իրենց, և՛ ուրիշների տրամադրությունը:
- Ի՞նչ ես անում, երբ տխուր ես լինում:

- Բարձր տրամադրության դեպքում ի՞նչ ես անում:

1.3. Օգնություն խնդրել կամ օգնություն առաջարկել: Բարեկիրթ ձևով օգնություն խնդրելը, օգնություն առաջարկելը կարևոր կարողություններ են:

- Անծանոթ քաղաքում (կամ անծանոթ թաղամասում) անցորդից հարցրու՛ քեզ անհրաժեշտ հասցեն:
- Խնդրի՛ր ավագ քրոջդ կամ եղբորդ օգնել քեզ՝ տնային հանձնարարությունը կատարել:
- Քո օգնությունն առաջարկի՛ր ընկերոջդ՝ դժվար առաջադրանքը կատարելիս (օրինակ՝ համակարգչային խաղի ժամանակ):
- Քո օգնությունն առաջարկի՛ր ծեր կնոջը՝ փողոցն անցնելիս կամ ծանր պայուսակը տանելիս:
- Հյուրասիրի՛ր սեղանի շուրջ նստած հյուրին՝ առաջարկելով այս կամ այն ուտեստը:

ԳԼՈՒԽ 2 . ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կախված հաղորդակցության նպատակից, տեղից, ժամանակից և հասցեատիրոջից՝ մարդիկ շփման և հաղորդակցման տարբեր ձևեր ու միջոցներ են ընտրում՝

- խոսքային և ոչ խոսքային
- բանավոր և գրավոր
- միջանձնային կամ զանգվածային
- մտերմիկ կամ գործնական, պաշտոնական և այլն:

2.1. Խոսքային և ոչ խոսքային: Մարդկանց միջև շփում կարող է լինել ոչ միայն բառերով, այլ նաև առանց բառերի:

Խոսքային հաղորդակցությունը պարունակում է խոսքային տարրեր՝ ձայնի որակ, արագություն, բարձրություն, խոսելու ոճ, ռիթմ, ինտոնացիա:

Մարդիկ հաճախ առանց բառերի էլ հասկանում են իրար: Դեմքի արտահայտությանը, աչքերին, շարժուձևին նայելով՝ կարող ենք ասել՝ մարդը ուրախ է, տխուր է, զարմացած է, թե վախեցած:

Կարելի է խաղալ «Տրամադրության բառարան» խաղը:

Կարելի է երեխաներին առաջարկել շրջել քաղաքում և պատրաստել ցուցանակներ, որոնց վրա բառերից բացի լինեն նկարներ:

2.2.Բանավոր և գրավոր հաղորդակցություն: Երեխան դպրոց է գալիս հիմնականում մայրենի լեզվի բանավոր խոսքին արդեն ազատ տիրապետելով: Դպրոցում պետք է զարգացնի այն, ինչպես նաև տիրապետի գրավոր խոսքին:

Երեխաները պետք է իմանան, որ բանավոր խոսքի միջոցով՝

- ❖ մտքեր են փոխանակում,
- ❖ նոր գիտելիքներ են ձեռք բերում,
- ❖ համատեղ գործեր են անում,
- ❖ կարգավորում են իրենց և ուրիշների վարքը:

Մինչդեռ գրավոր խոսքը միջնորդավորված է: Այն հաղորդակցություն է տարածության և ժամանակի միջև:

Ֆրանսիացի մանկավարժ Սելեստեն Ֆրենեն գրում է. «Երեխան արդեն հասկանում է գրի՝ որպես իր մտքերի արտահայտման ու հաղորդման միջոցի կարևորությունը: Բայց պետք է, որ նա զգա նաև դրա անհրաժեշտությունը: Չէ՞ որ համադասարանցիների և ուսուցչի հետ հաղորդակցվելու համար խոսքը և միմիկան բավարար են:

Ու՞մ է պետք զենքը, որը չի գործածվում… Գիրը երեխայի համար միայն այն ժամանակ է իմաստ ձեռք բերում, երբ բանավոր խոսքով հաղորդակցվելու հնարավորություն չկա, երբ անհրաժեշտ է «խոսել» նրանց հետ, ովքեր հեռու են…:

Կարևորն այն է, որ երեխան զգա գրի՝ որպես ինքնաարտահայտման միջոցի իմաստը, արժեքը, անհրաժեշտությունը, անհատական ու հասարակական դերը»:

Բանավոր ու գրավոր խոսքը երեխայի ոչ միայն բառեր, ուղղագրություն, քերականական գիտելիքներ են տալիս, այլև զարգացնում են նրա բանավոր ու գրավոր հաղորդակցական կարողությունները:

Գրավոր խոսքը երեխան պետք է սովորի ոչ միայն արտագրություններ անելու, առաջադրանքներ անելու, առաջադրանքներ գրելու համար, այլ նաև հայտնելու իր կարծիքը, իր տեսակետը, իր վերաբերմունքը: Դա էլ կնպաստի, որ նա ավելի ազատ, ինքնուրույն ու ինքնավստահ լինի:

Ուսուցիչը կարող է սկսել առաջադրանքն այսպիսի զրույցով.

Մենք կարող ենք «խոսել», հաղորդակցվել մարդկանց հետ, ովքեր մեզանից առաջ են ապրել՝ կարդալով նրանց գրածները: Երբ կարդում ենք մեզանից հարյուրավոր տարիներ առաջ ապրած գրողների գործերը, թվում է, թե նրանք այսօր էլ «խոսում» են մեզ հետ:

Բայց մենք կարող ենք հաղորդակցվել նաև նրանց հետ, ովքեր մեզանից հետո են գալու: Մեր այսօրվա գրածը մարդիկ կարող են ամիսներ կամ տարիներ հետո էլ կարդալ:

2.3.Միջանձնային, խմբային և զանգվածային հաղորդակցություն:

Միջանձնային հաղորդակցություն- ընկերների զրույց, ուսուցչի և աշակերտի զրույց, հեռախոսային խոսակցություն, նամակագրություն և այլն:

Խմբային հաղորդակցություն- ընտանեկան զրույց, ծնողական ժողով, դասարանական քննարկում և այլն:

Զանգվածային հաղորդակցություն – հեռուստատեսային կամ ռադիոհաղորդում, համացանց, թերթերի ամսագրերի թողարկում, հանրահավաք և այլն:

Հաղորդակցության տեսակները՝ ըստ մասնակիցների քանակի.



Գծապատկեր 1. Հաղորդակցության տեսակներն՝ ըստ մասնակիցների քանակի

Արդյո՞ք միշտ ենք հաշվի առնում, թե ում հետ, երբ, ինչ նպատակով ենք խոսում կամ գրում: Ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի շփումն արդյունավետ լինի, այսինքն՝ հասնենք մեր հաղորդակցական նպատակին: Հաջող շփվելու համար պետք է հաշվի առնենք՝

- ո՞վ է ասում,
- ի՞նչ է ասում,
- ու՞մ է ասում,
- Ե՞րբ է ասում,
- ինչպե՞ս է ասում:

Ուսուցիչը կարդում է հեքիաթը երեխաների համար, ապա առաջարկում է աշխատանքային տետրից կարդալ հեքիաթից ընտրված երկխոսությունները:

Հեքիաթի յուրաքանչյուր հատվածը կարդալուց հետո ուսուցիչը քննարկում է երեխաների հետ հետևյալ հարցերը՝ օգնելով նրանց տարբերակել հաղորդակցական իրավիճակի բաղադրիչները (ով, ում, ինչ և ինչու ասաց).

- Ո՞վ է խոսում (հասցեագրողը):
- Ու՞մ հետ (հասցեատերը):
- Ի՞նչ է ասում (բովանդակությունը, տեղեկությունը):
- Ի՞նչ նպատակով (նպատակը):
- Ինչպե՞ս է ասում (ձևը):

2.4.Մտերմիկ կամ գործնական, պաշտոնական հաղորդակցություն: Հաղորդակցության բնույթը կախված է այն հանգամանքից, թե ի՞նչ նպատակով (ինչու՞), ի՞նչ պայմաններում (ե՞րբ, որտե՞ղ) են հաղորդակցվում:

Այս տեսանկյունից երեխաներին կարելի է ներկայացնել տարբեր իրադարձություններ (մտերմիկ և պաշտոնական)՝ առաջարկելով կողմնորոշվել նրանցում:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՍՔԱՅԻՆ ԺԱՆՐԵՐԸ

Մայրենիի ուսուցման ընթացքում մենք հաճախ ենք անդրադառնում տեքստին՝ ի դեմս պատմությունների, առակների, հեքիաթների և այլ գրական-գեղարվեստական նյութերի: Սակայն լեզուն նախ և առաջ կենդանի հաղորդակցության միջոց է, ուստի շատ կարևոր է ուսումնական տեքստերին նաև հաղորդակցական ուղղվածություն տալ, ինչը մեծապես կնպաստի երեխայի խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

«Խոսքային ժանրեր» բաժնում անդրադառնում ենք ոչ թե գեղարվեստական գրական, այլ իրական խոսքում գործածվող ժանրերին (խնդրանք, հրաման, հրահանգ, դիմում, նամակ և այլն):

Այս բաժնում անդրադառնում ենք հետևյալ հարցերին.

- Տեքստը և նրա առանձնահատկությունները
- Տեքստի տեսակները (պատմողական, նկարագրական, դատողական)
- Խոսքային ժանրերի (առօրեական, գեղարվեստական, լրագրողական)

Տեքստը լեզվի ուսուցման, խոսքի զարգացման համար ամենակարևոր հասկացություններից մեկն է, քանի որ նրա գլխավոր նպատակը բանավոր և գրավոր ազատ հաղորդակցվելն է: Տեսքտը հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է: Տեքստն ունի վերնագիր, որն արտահայտում է թեմա կամ հիմնական միտք:

Երեխան պետք է՝

- տարբերակի տեքստը նախադասությունների պարզ գումարից
- իմանա տարբերակի՝
- տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները (թեմատիկ միասնություն, իմաստային ամբողջականություն, կապակցվածություն, վերնագիր, բանալի-բառեր, պարբերություն,
- տեքստի հիմնական կառուցվածքային - իմաստային մասերը (սկիզբ, ընթացք,ավարտ)):

Տեքստը նաև ունենում է գլխավոր միտք, ասելիք: Հասկանալ տեքստը նշանակում է հասկանալ նրա գլխավոր, հիմնական միտքը:

Հաճախ տեքստի գլխավոր միտքը կարող է որոշել տեքստի մի նախադասությունը:

Հաճախ այդ հուշում-նախադասությունը լինում է տեքստի սկզբում կամ վերջում:

Յուրաքանչյուր տեքստում լինում են նաև բանալի բառեր կամ արտահայտություններ, որոնք հուշում են գլխավոր թեման, բնորոշում են հերոսներին, դեպքերը:

Սրանք տեքստի առանձնահատկություններն են, նրանց օգնությամբ կարող ես պատկերացում կազմել անծանոթ տեքստի մասին:

Տեքստերը լինում են պատմողական, նկարագրական, դատողական: Կան տեքստեր, որտեղ հիմնականում պատմվում է, դեպքերի, հերոսների արարքների մասին: Այդպիսի տեքստերը կոչվում են պատմողական:

Կան տեքստեր, որոնց մեջ հիմնականում նկարագրվում են մարդիկ, բնությունը, առարկաները: Այդպիսի տեքստը կոչվում է նկարագրական:

Կան տեքստեր, որոնցում հիմնականում բացատրվում են դեպքերի, երևույթների պատճառները, ապացուցվում է ինչ-որ բանի պատճառը, հետևանքը: Ինքդ էլ դիմում ես դատողության, երբ փորձում ես ինչ-որ բան ապացուցել, հիմնավորել, բացատրել, թե ինչու պիտի արդպես լինի: Այդպիսի տեքստերը կոչվում են դատողական:

3.1. Խոսքային գործունեություն

1. Հաղորդակցական իրավիճակներ
2. Հաղորդակցական դերեր
3. Հաղորդակցության գործընթացի մասնակիցներ

Հաղորդակցական իրավիճակներ: Մենք սովորաբար շփվում ենք մարդկանց հետ մի որոշակի նպատակով և մեր հաղորդակցության արդյունավետության մասին կարող ենք դատել նրանով, թե որքանով հաջող ենք լուծել մեր խնդիրը: Այդ խնդիրը կոչում ենք հաղորդակցական նպատակ (ինտենցիա):



Գծապատկեր 2. Հաղորդակցական եռանկյուն

Կարելի է կարդալ «Ինչպե՞ս է շունը մարդուն ընկեր դարձել» հեքիաթը կամ «Կախարդական բառը» պատմվածքը: Քննարկել երեխաների հետ՝ օգնելով նրանց տարբերակել հաղորդակցական իրավիճակի բաղադրիչները:

Հաղորդակցական դերեր: Երեխան տանը, դպրոցում, հասարակական վայրերում տարբեր դերերով է հանդես գալիս և, իհարկե, տարբեր կերպ պիտի խոսի, հաղորդակցվի, վարվի: Պետք է օգնել երեխային հասկանալու, տարբերակելու սոցիալական և հաղորդակցական դերերը:

Ուսուցիչը կարող է սկսել մի փոքրիկ զրույցով, որ մարդն իր կյանքում բազմազան դերեր է կատարում՝ որդի կամ դուստր, թոռնիկ, հանդիսատես, ուղևոր, գնորդ, դասընկեր և այլն: Եվ ամեն անգամ նա խոսում և վարվում է այդ պահի իր դերին համապատասխան: Օրինակ՝ դասարանում ուսուցչի հետ խոսում և վարվում է որպես աշակերտ, իսկ ընկերոջ հետ՝ որպես դասընկեր:

Կարելի է տալ հանելուկ:

Երկու մայր են,	Երկու հայր են,
Երկու աղջիկ,	Երկու որդի,
Տատն ու թոռը:	Պապն ու թոռնը:
Քանի՞սն են:	Քանի՞սն են:

Առաջարկել երեխաներին նկարների տակ գրել նրանց սոցիալական դերերը:

Հաղորդակցման գործընթացի մասնակիցներ: Շփումը, հաղորդակցությունը երկկողմանի գործընթաց է, և շփվողները հաղորդակցվողներն այդտեղ տարբեր դերեր են կատարում (մեկն ասում, գրում, տեղեկություն է հաղորդում (ուղարկող, հասցեագրող, հաղորդող), մյուսը՝ լսում է, կարդում, տեղեկություններն ընդունում (ունկնդիր, հասցեատեր, հաղորդումը ստացող)):

Առաջադրանք 1:

1-ին զրուցակից - Հրավիրում է ընկերոջն իրենց տուն:

2-րդ զրուցակից - Ընդունում է հրավերը, շնորհակալություն հայտնում:

Առաջադրանք 2:

1-ին զրուցակից- Հարցնում է, թե որ գիրքն է սիրում բոլորից շատ:

2-րդ զրուցակից – Պատասխանում է՝ասելով գրողի անունը և գրքի, հեքիաթի կամ պատմվածքի վերնագիրը”

Առաջադրանք 3:

1-ին զրուցակից- Խնդրում է փոխարինաբար տալ գիրքը, խաղալիքը, հեծանիվը կամ ինչ-որ այլ բան:

2-րդ զրուցակից - Համաձայնում է կամ մերժում՝ ասելով պատճառը:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՐԵԿԻՐԹ ՇՓՈՒՄ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Խոսք և հաղորդակցություն» դասերի դերն այս հարցում պետք է լինի երեխաներին ծանոթացնել բարեկիրթ շփման կանոններին, սկզբունքներին, դրանք քննարկել, վերլուծել՝ հնարավորություն տալով երեխաներին մտածելու, սեփական դիրքորոշում ձևավորելու՝ դրանով իսկ դնելով բարեկիրթ շփման կարողությունների հիմքը: Իսկ այդ կարողությունների զարգացումը, հղկումն ու ավանդույթի ձևավորումն արդեն բոլոր դասերի և ամենօրյա շփման խնդիրներն են:

Բարեկիրթ շփման կարողությունների զարգացումը տարրական դասարաններում մի քանի խնդրի լուծում է ենթադրում:

- Տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը,
- Իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ,
- Կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան:

Ուսուցիչն առաջարկում է հիշել ողջույնի, բարևի իրենց իմացած խոսքերը, բառերն ու արտահայտությունները: Դրանք կարող են գրել գրատախտակին կամ պաստառին: Հետո քննարկում են, թե դրանցից որը, երբ, ում և ինչ իրավիճակում են ասում:

Բարեկիթ շփման, հաղորդակցության ժամանակ սովորաբար բարևին կամ հրաժեշտին հաջորդում են նաև որոշակի ընդունված արտահայտություններ, հարցեր, մաղթանքներ՝ ուղղված զրուցակցին:

Ողջու՛յն, ի՞նչ լավ է, որ հանդիպեցինք:

Ողջու՛յն, ինչպե՞ս է տրամադրությունդ:

Ցտեսությու՛ն, ուրախ էի հանդիպման համար:

Բարև՛, ո՞նց ես:

Բարի՛ գիշեր, կհանդիպենք վաղը:

Բարև՛ Ձեզ: Շատ հաճելի է:

Բարև՛, վաղուց չեինք հանդիպել:

Բարի՛ գալուստ, շատ էի կարոտել:

Ցտեսությու՛ն, շատ հաճելի էր:

Բարի՛ օր, ուրախ եմ քեզ տեսնելու համար:

Բարի՛ ճանապարհ, մինչ նոր հանդիպում:

Ցտեսությու՛ն, հաջող օր եմ մաղթում:

Բարև՛ Ձեզ, ինչպե՞ս եք:

Բարեկիրթ շփման, հաղորդակցության ժամանակ սովորողներին կարելի է գրական տեքստերից կամ տեսանյութերից հատվածներ ներկայացնել և քննարկել բարեկիրթ և ոչ բարեկիրթ վարքի դրսևորումները:

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին խաղի համար կազմել երկու շրջան իրար մեջ՝ հավասար քանակի աշակերտներով:

Երեխաները շրջանում կանգնում են դեմքով դեպի իրար:

Երեխաները պետք է բարևեն իրենց դիմաց հայտնված ընկերոջը, ողջույնի բարեկիրթ արտահայտություններ փոխանակեն, ապա հրաժեշտ տան: Այնուհետև պետք է շրջանով պտտվեն հակառակ ուղղությամբ, մինչև հայտնվեն նոր ընկերոջ դիմաց: Ողջույնի փոխանակությունը կրկնվում է: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ, որ երեխաները հասցնեն բարևել և հրաժեշտ տալ բոլորին:

Որպես խաղի կարևոր պայման՝ ուսուցիչն առաջարկում է երեխաներին ողջույնի և հրաժեշտի հնարավորինս շատ տարբերակներ օգտագործել:

Իսկ դու քաղաքավարի՞ ես:

N	Հարցեր	Այո	Երբեմն	Ոչ
1.	Շնորհակալություն հայտնու՞մ ես մայրիկին կամ հատիկին նախաճաշ, ճաշ, ընթրիքի համար:			
2.	Ներողություն խնդրու՞մ ես, երբ ուշացած ես մտնում դասարան:			
3.	Հարևաններիդ հանդիպելիս բարևու՞մ ես:			
4.	Երբ պատահաբար հրում ես որևէ փոքրիկի, նրանից ներողություն խնդրու՞մ ես:			
5.	Կարողանու՞մ ես հանգիստ, առանց ձայնդ բարձրացնելու խոսել նույնիսկ այն ժամանակ, երբ վիճում ես: (շարունակություն)			
6.	Շնորհակալություն հայտնու՞մ ես, երբ մեծահասակներն օգնում են քեզ որևէ դժվար աշխատանք կատարելու:			
7.	Տոների առթիվ շնորհավորու՞մ ես հարազատներիդ:			
8.	Ընելուց առաջ «բարի գիշեր» մաղթու՞մ ես ընտանիքիդ անդամներին:			

Գծապատկեր 3. Սեփական բարեկրթության մակարդակը գնահատելու թեստ

«Այո» - 2 միավոր
«Երբեմն» - 1 միավոր
«Ոչ» - 0 միավոր
12-16 միավոր - Ամեն ինչ կարգին է, այդպես շարունակիր:
8 – 11 միավոր - Քեզ միշտ չէ, որ հաջողվում է քաղաքավարի լինել, ավելի ուշադի՛ր եղիր:
0- 8 միավոր – Պետք է սովորես քաղաքավրի լինել, դրա համար մի՛ խնայիր ո՛չ ջանք, ո՛չ ժամանակ: Համոզված ենք, որ քեզ կհաջողվի:

4.1.Բարեկիրթ ձևով մխիթարել, ցավակցել:

Բարեկիրթ շփման կարևոր բաղադրիչներից մեկն էլ տարբեր իրավիճակներում մարդկանց մխիթարելը, խրախուսելը, քաջալերելն է: Այդ նպատակով աշակերտներին պետք է սովորեցնել օգտագործել մխիթարական, քաջալերանքի արտահայտություններ, որոնք միտված կլինեն դիմացինի հոգեվիճակն ըմբռնելու, նրան ապրումակցելուն, այդ հոգեվիճակը մեղմելուն:

Ահա նման բառերի մի քանի նմուշ.

- Հանգստացի՛ր…
- Մի՛ տխրիր…
- Լաց մի՛ լինիր…
- Մի՛ վշտանա…
- Մի՛ բարկացիր…
- Մի՛ վախեցիր…
- Ոչի՛նչ …
- Դե լավ, ի՞նչ է պատահել որ …

4.2.Բարեկիրթ- ոչ բարեկիրթ: Բարեկրթության և բարեկիրթ վարքի մասին զրույցը սկսելու համար ուսուցիչը կարող է գրական տեքստից (կամ տեսանյութերից) հատվածներ ներկայացնել աշակերտներին և քննարկել բարեկիրթ վարքի դրսևորումները:

Օրինակ՝ Հովի. Թումանյանի «Խոսող ձուկը» հեքիաթից գտնել բարեկիրթ և ոչ բարեկիրթ բառերն ու արտահայտությունները, ոչ բարեկիրթ խոսքը դարձնել բարեկիրթ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է բեռնակրի վրա:

- Տո՛, ախմա՛խ,- ասում է նա,- ես, ես ջրի մեջ թրջվելով, ձուկ եմ բռնում, դու իմ աշխատանքը առնում ես և ջուրը գցում … Դե՛, գնա կորի՛ր, էլ իմ աչքին չերևաս: Ձկնորսի խոսքերը փոխել այնպես, որ դրանք վիրավորական չլինեն բեռնակրի համար:

4.3.Քաղաքավարի, բարեկիրթ, բարեհամբույր: Բարեկիրթ խոսքի առանձնահատկություններից է նաև քաղաքավարական տարբեր գրություններ գրելու կարողությունը: Պետք է ստեղծել տարբեր իրավիճակներ (իրական կամ խաղային), որտեղ երեխաները ներողություն խնդրեն, ներկայացնեն իրենց կամ ընկերներին, ինչ-որ տեղ հրավիրեն, ընդունեն կամ մերժեն հրավերը:

Օրինակ՝ Դու ստացել ես հրավիրատոմս: Դասընկերներդ քեզ հրավիրում են մասնակցել իրենց երգչախմբի համերգին:

- Աշխատիր հրավիրատոմսդ այնքան հետաքրքիր լինի, որ ում հրավիրել ես անպայման գա:
- Շնորհակալություն հայտնիր և ընդունիր հրավերը:
- Շնորհակալորություն հայտնիր և բարեկիրթ մերժի՛ր հրավերը, այնպես, որ հրավիրողը չնեղանա:

Եզրակացություն

Այսպիսով՝ լեզվի տիրապետման իմաստը ոչ միայն և ոչ այնքան մշակութային գիտելիքների յուրացումն է, որքան այդ գիտելիքների հիման վրա խոսքային գործունեության ակտիվ տիրապետումը:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի կառուցվածքը պայմանավորված է ուսումնական խնդիրների և խոսքային իրավիճակների բովանդակությամբ և նպատակներով:

Վերը նշված խնդիրները միտված են արդյունավետ խոսքային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ուստի նաև՝ արդյունավետ շփվող և հաղորդակցվող անձի ձևավորմանը:

Օգտագործված գրականություն

1. Թերզյան Գ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ. Թ523 Խոսք և հաղոդակցություն. Մեթոդական ձեռնարկ: –Երևան: ՄԱՆՄԱՐ, 2011.
2. Թերզյան Գ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ. Խոսք և հաղորդակցություն 1 Մեթոդական ձեռնարկ. –Երևան: «Զանգակ» հրատ., 2013.
3. Թերզյան Գ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ. Խոսք և հաղորդակցություն 2 Մեթոդական ձեռնարկ. – Երևան: «Զանգակ» հրատ., 2016.
4. Թերզյան Գ., Խաչատրյան Հ. Խոսք և հաղորդակցություն 3, Մեթոդական ձեռնարկ.- Երևան: «Զանգակ» հրատ., 2017.
5. Համացանց https://znanio.ru/media/------2614961
6. Նախաշավիղ Գիտամեթոդական Հանդես 1-2.2007.- Երևան: Հիմնադիր հրատարակիչ՝ Կրթության ազգային ինստիտուտ.